ՍՅՈՒԶԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԳԱԱ Արվեստի ինստիտուտի հայցորդ,
ՀՊՄՀ արվեստի պատմության,
տեսության և մշակութաբանության ամբիոն
ՀՏԴ 745/749

ԽՃԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ
/նախաքրիստոնեական շրջան/

Բանալի բառեր և արտահայտություններ. արվեստ, խճանկարչություն, դեկորատիվ հարդարանք, հելլենիստական, դիցաբանական, պեղումներ:

Ключевые слова и выражения: искусство, мозаики, декоративный орнамент, эллинистической, мифологические, раскопки.

Key words and expressions: arts, mosaics, decorative ornament, Hellenistic, mythological, excavations.

Խճանկարը դեկորատիվ-կիրառական արվեստի և գեղանկարչության հնագույն ձևերից է: Նկարչության այս ճյուղը գերազանցապես մոնումենտալ և գեղազարդող բնույթ է կրում: Հնագույն մոնումենտալ խճանկարներ հայտնաբերվել են հեթանոսական մեհյաններում, քրիստոնեական եկեղեցիներում, հանրային ու պետական կարևոր շինություններում՝ հատակներին և պատերին:

Խճանկարը՝ որպես տարածքի ձևավորման արվեստ, առաջին անգամ կիրառվել է Միջագետքում՝ մ.թ.ա. IV հազարամյակում: Հնագույն նմուշներ, որոնք լրացրել են շինության ճարտարապետական ամբողջությունը, երևան են եկել 1928 թվականի հին շումերական քաղաքների՝ Ուրուկի և Ուրի տարածքում հայտնաբերված տաճարի (մ.թ.ա. III հազարամյակ) պատերին և կիսասյուներին: Շումերները խճանկարը օգտագործել են և՛ ֆունկցիոնալ, և՛ էսթետիկ նպատակներով: Ուր քաղաքի պեղումների ժամանակ անգլիացի Լիոնարդ Վուլլիի (1880-1960) կողմից հայտնաբերվել է պայմանականորեն «Շտանդարտներ. պատերազմի և խաղաղություն» (մ.թ.ա. 2600-2400 թթ., 21,59x49,53 սմ, Լոնդոն, Բրիտանական թանգարան) անվանումը ստացած նմուշը[1]:

[1] В.Струве, Древнейшие государства в Двуречье (Всемирная История),том 1, М., 1956, стр. 192-193.

Խճանկարը լայնորեն կիրառվել է նաև Եգիպտոսում: Դրա վառ օրինակն է Թութենհամոնի գահը[2] (մոտ մ.թ.ա. 1325, 102x54x60 սմ., Կահիրե, Եգիպտական թանգարան), որի վրա ապակուց, էմալից և թանկարժեք քարերից հավաքված է Թութանհամոնի և նրա կնոջ կյանքից մի տեսարան, իսկ գլխավերևում գլխավոր աստված Աթոնն է՝ արևի սկավառակի տեսքով:

Կատարման տեխնիկայից և որոշ գեղարվեստական առանձնահատկություններից ելնելով՝ դասական խճանկարը բաժանվում է երեք տեսակի: Դրանք կարելի է դիտարկել անտիկ՝ հունահռոմեական, խճանկարչական արվեստի զարգացման հետ զուգակցելով:

Հատակի խճանկարչությունը, հավաքված գույնզգույն գետաքարերից (голыш) և վառ կարմիր գույնի լավ թրծված խեցուց, հռոմեացիների կողմից անվանակոչվել է *Opus barbaricum*: Այն անտիկ խճանկարի հնագույն տեսակներից է, որը կիրառվել է մ.թ.ա. V-II դարերի հատակները պատկերազարդելու նպատակով: *Opus barbaricum* տեխնիկայով կատարված հատակներ հայտնաբերվել են Օլինֆ քաղաքում և Մակեդոնիայի անտիկ տներում (մ.թ.ա. V դարավերջ և IV դարի առաջին կես):

Խճանկարային արվեստի, նրա տեխնիկայի զարգացման և կատարելագործման ընթացքում ստեղծվում է *Opus tessellatum* տեխնիկան: Այն մեծ տարածում է ստանում մ.թ.ա. IV-I դարերի Հռոմեական կայսրության արվեստում, հետագայում՝ Արևմտյան Եվրոպայի երկրներում: Անգամ Դիոկղետիանոս կայսեր օրոք (224-311) խճանկարով զարդարված հատակների համար մրցանակներ են սահմանել:

Ի տարբերություն գեղանկարիչների, խճանկարիչները իրենց աշխատանքները չքին ստորագրում, թերևս այդ է պատճառը, որ եզակի անուններ են մեզ հասել: Հռոմեացի գրող Պլինիոս Ավագը (մ.թ. 23-79) նշում է նկարիչ Պերգամոնյան Սոսայի (մ.թ.ա. 250-150) մասին, որն այն եզակի խճանկարիչներից է, ում անունը պահպանվել է: Գրողը նրան ներկայացնում է որպես «Չհավաքված տունը» (հուն. թարգ.- Asarotos oikos) խճանկարի հեղինակ[3]: Թեև այդ աշխատանքը չի պահպանվել, բայց մեզ են հասել կրկնօրինակները[4]: Այն հատակին է, որում պատկերված են

[2] В.Кондрашов, Цивилизационные миры традиционных обществ Востока (История мировой культуры), Ростов на Дону, 2002, стр.46.

[3] Гай Плиний Старший. Естественная история ископаемых тел (пер. и прим. В. Севергина), СПб., 1819, стр. 249.

[4] Մեզ հասած կրկնօրինակներից պահվում են Բորդոյի թանգարանում, Թունիսում (III դար): Այս թեման հատակից դեպի առաստաղ տեղափոխվեց IV դարում (Սբ Կոստանցիա, Հռոմ):

խնջույքից հետո մնացած ուտելիքներ՝ ձկներ, մրգեր և այլն[5]: Այստեղ առավել արտահայտվում է պատրանքային տարրը: Խճանկարչի այլ աշխատանքներից է «Աղավնիները սափորին» պատկերը (Ադրիանայի վիլլա, Տիվոլի)[6], ուր թեպետ աղավնիները ներկայացված են հուզականորեն, բայց դրա հետ մեկտեղ շատ ռեալիստական են[7]:

Հասարակական և պետական շինությունների զարդարման համար խճանկարների օգտագործման աճը պատճառ հանդիսացավ առավել կատարյալ *Opus vermiculatum* տեխնիկայի առաջացման համար:

Եթե խճանկարի պատրաստման երկու առաջին տեսակները համեմատաբար բարդ չեն, ապա *Opus vermiculatum* տեխնիկային տիրապետումը, միաժամանակ՝ նոր նյութերի ներգրավումը և կատարման տեխնիկական եղանակների կատարելագործումը, անտիկ խճանկարիչներին հնարավորություն ընձեռնեց ստեղծել հատակի խճանկարչության առաջադեմ, բարձրարվեստ նմուշներ[8]:

Այդ տեխնիկայով է հավաքվել 1916 թվականին Դուրրեսում (Ալբանիա) հայտնաբերված, մ.թ.ա. IV դարին թվագրվող «Դուրրեսի գեղեցկությունը» (Տիրանա, Ալբանիայի ազգային պատմության թանգարան) անվանումը կրող խճանկարը: Այն անտիկ արվեստի հիանալի նմուշ է, որի մեջ հելլենիստական արվեստը զուգորդվում է տեղական ավանդույթներին: Ոճական առումով նման է Մակեդոնիայի հնագույն մայրաքաղաք Պելլայում պեղված խճանկարին («Առյուծի որսը», մ.թ.ա. IV դարի վերջ, 1,64x3,37 մ, Դիոնիսոսի տուն), որին հատուկ են վաղ հելլենիստական արվեստի մի շարք գծեր՝ կերպարների զգացմունքայնությունը, կոմպոզիցիայի դինամիկան, լարվածությունը և ողբերգականությունը:

Opus vermiculatum տեխնիկայով է պատրաստված Պոմպեյում՝ Ֆավնի տանը, 1831 թվականին պեղված, մ.թ.ա. I դարին պատկանող «Իսոսի ճակատամարտը» կամ «Ալեքսանդր Մակեդոնացու ճակատամարտը Դարեհ III-ի հետ» խճանկարը[9] (2,72x5,13 մ, Նիապոլ, Ազգային

---

[5] Տե՛ս Е.Ермолаева, Об одной древнегреческой пародии и античных мозаиках в стиле «неприбранный пол», СПб, 2015, стр. 69-76.

[6] Աշխատանքը պեղվել է 1737 թվականին և պահվում է Հռոմի Կապիտոլիումի թանգարանում: Ջուր խմող աղավնիների պատկերներ կան նաև Պոմպեյի որմնանկարներում:

[7] А.Виннер, Материалы и техника мозаичной живописи, М. 1953, стр. 17-18.

[8] А.Ларионов, Искусство античной напольной мозаики, СПб, 2014, стр. 8.

[9] Այն համանուն նկարի խճանկար տարբերակն է: Նկարի հեղինակը Ֆիլոկսենն է: Տե՛ս այս մասին М.Доброклонски, А.Чубовой, История искусства зарубежных стран, М., 1979, стр. 145.

հնագիտական թանգարան)[10]: Դա հռոմեական ամենահայտնի խճանկարներից է, ուր ներկայացված է մ.թ.ա. 333 թ. Իսոսի մոտ Ալեքսանդր Մակեդոնացու և Դարեհ III Կոդոմանի միջև տեղի ունեցած ճակատամարտը:

Հետագա դարերի ստեղծագործությունների համար, մասնավորապես՝ մ.թ.ա. III-I դդ., բացի թվարկված նյութերից, խճանկարային շարվածքի մեջ սկսեցին օգտագործել նաև գունավոր սմալտա, որի պատրաստման մեջ հմտացել էին անտիկ ապակեգործության վարպետները: Սմալտայի գունապնակը, որը կազմված է թափանցիկ, կիսաթափանցիկ և խուլ տեսակներից, տարբերվում է գուներանգի խայտաբղետությամբ:

Այս դարաշրջաններին թվագրվող հռոմեական խճանկարչական արվեստի գնահատելի նմուշներ են պահպանվել Սիցիլիայում, վերջիններից է «Վիլլա դելա Կասելլե»-ինը[11] (III-IV):

I-V դարերին թվագրվող Անտիոքի խճանկարներն առանձնանում են կոմպոզիցիոն կառուցվածքով, հարուստ գունատոնային լուծումներով, նուրբ լուսաստվերային անցումներով: Այստեղ չկան արյունալի տեսարաններ, ինչպիսիք Հյուսիսային Աֆրիկայում, պատվիրատուները նախընտրում էին դասականությունը, գեղեցիկ հերոսներին, ռոմանտիկական տրամադրությունները: Խճանկարներում առկա գործողությունները զարգանում են անշտապ, շարժումները նուրբ են, պահպանված են դասական գեղեցկության ընկալումները. խոշոր աչքեր, ճշգրիտ դիմագծեր: Հիմնականում պատկերվում էին հունական աստվածները, դիցաբանական սյուժեները («Եվրոպայի առևանգումը» (II դար, Բեյրութ, Ազգային թանգարան), Հերմեսը փոքրիկ Դիոնիսի հետ (IV դար, Անտիոք)): Մեծ տարածում ուներ նաև ծովային աստվածության պատկերումը՝ Օվկիանի և Ֆետիսի միջոցով: Նրանց դասական կերպարները կարող ենք տեսնել «Օրացույցների (սեզոններ) տանը:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ նշենք, որ անցնելով դարերի միջով՝ խճանկարչությունը ունեցել է և՛ վերելքներ, և՛ վայրէջքներ: Պահպանված և մեզ հասած նմուշները փաստում են, որ այն օգտագործվել է ոչ միայն

[10] Սկզբնապես աշխատանքը հավաքված էր գետնի վրա, սակայն 1913 թ. առավել լավ տեսանելի դարձնելու համար մասնագետներն այն ամրացրեցին պատին: 2005 թ. Պոմպեյում, Ֆավնի տանը, որտեղ սկզբնապես գտնվել է խճանկարը, հավաքվեց և տեղադրվեց կրկնօրինակը:

[11] 2013 թ. օգոստոս 15-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ճանաչվել են, որպես համաշխարհային ժառանգություն:

արտաքին միջավայրը գեղեցկացնելու, այլ նաև որպես ժամանակաշրջանի գաղափարախոսությունների պատկերավորման վառ արտահայտչամիջոց:

Ս. Գրիգորյան

Խճանկարչության զարգացման ընթացքը
/նախաքրիստոնեական շրջան/

Ամփոփում

Խճանկարը դեկորատիվ-կիրառական արվեստի և գեղանկարչության հնագույն ձևերից է: Խճանկարը՝ որպես տարածքի ձևավորման արվեստ, առաջին անգամ կիրառվել է Միջագետքում՝ մ.թ.ա. IV հազարամյակում: Շումերները խճանկարը օգտագործել են և՛ ֆունկցիոնալ, և՛ էսթետիկ նպատակներով:

Կատարման տեխնիկայից և որոշ գեղարվեստական առանձնահատկություններից ելնելով՝ դասական խճանկարը բաժանվում է երեք տեսակի. *Opus barbaricum*, *Opus tessellatum* և *Opus vermiculatum*: Վերջիններս դիտարկվում են անտիկ՝ հունահռոմեական, խճանկարչական արվեստի զարգացման հետ զուգակցելով:

С. Григорян

Резюме

Мозаичная одна из старейших области декоративно-прикладного искусства и живописи. Мозаика как искусство дизайна пространства, впервые использовалас в Месопотамии /IV тысячелетие до н.э./. Шумеры использовали мозаику как функциональных, так и эстетических целей.

Учитавая некоторые методики и художественные особенности, классическая мозаика делится на три типа. Opus barbaricum, Opus tessellatum и Opus vermiculatum.

S. Grigoryan

Summary

Mosaic is one of the oldest area of decorative arts and painting. Mosaic art design as a space for the first time used in Mesopotamia / IV of the millennium BC /. The Sumerians used a mosaic of both functional and aesthetic purposes.

Uchitavaya some techniques and artistic features, classic mosaic is divided into three types. Opus barbaricum, Opus tessellatum and Opus vermiculatum.